Արձանագրություն N 4

«ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 դեկտեմբերի 2019թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Միքաելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Ասատրյան և Վ.Աթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

I.«ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման բանակցությունների մասին

(Ն.Միքաելյան)

1.1. Գների նվազեցման բանակցությունները տեղի են ունեցել 2019թ-ի դեկտեմբերի 27-ին, ժամը՝ 16:00-ին:

1.2. Բանակցություններին հրավիրվել էին ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներ՝ «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲ և «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունները:

1.3. Հրավիրված մասնակիցներից «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ն ներկա չի գտնվել միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրված նիստին:

1.4. «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն մինչև բանակցությունների նիստը սկսվելը էլեկտրոնային կարգով տեղեկացրել է, որ հաստատում է իր կողմից ներկայացված գնային առաջարկը, և այն ենթակա չէ փոփոխման:

II.«ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման բանակցությունների արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկների մասին

(Ն.Միքաելյան)

2.1 Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակիցների կողմից հայտով ներկայացված սկզբնական գնային առաջարկները պահպանվել են և հետևյալն են /պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով/.

	Մասնակցի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1.	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	10,960,000	2,192,000	13,152,000
2.	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	8,900,000	1,780,000	10,680,000

III.Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի որոշման և հայտարարության մասին

(Ն.Միքաելյան)

3.1. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով և հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետը՝ «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հրավերի պայմաններին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 43-րդ կետի պահանջները, սույն նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը

1) հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.

2) էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,

3) էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

IV. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին</u>

(Ն.Միքաելյան)

4.1. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ն, ք. Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, 7-րդ հարկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Նարինե Միքաելյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Տաթևիկ Ասատրյան _____

Վլադիմիր Աթյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Հարությունյան